

ՀՀ տարածքային կառավարման նախարարության 2014 թվականի կարիքների համար գրենական ապրանքների գնման մրցույթի հայտարարություն/ հրապարակվել է 27.02.2014թ.

**«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ**

Հարգելի մասնակից

- նախքան հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման.
- հայտերը ներբեռնելիս և ներկայացնելիս պետք է առաջնորդվել www.armeps.am կայքում (կայքի վերևի ծախս անկյունում) տեղադրված ժամացույցով,
- հայտ կազմելիս անհրաժեշտ է ուշադրությամբ ծանոթանալ կայքի «Նորություններ» և «Հաճախ փրվող հարցեր» բաժիններում պարբերաբար տեղադրվող և թարմացվող նյութերին,
- եթե ընթացակարգը չափաբաժիններով է, ապա առաջին քայլով պետք է www.armeps.am կայքի «Հայտ» դաշտում նախապես նշել այն չափաբաժինը կամ չափաբաժինները, որոնց համար մասնակիցը հայտ է ներկայացնում, որից հետո նոր միայն լրացնել մնացած դաշտերը, այլապես հայտի փաստաթղթերը չեն բացվի գնահատման ժամանակ, վերոգրյալ մասը մանրամասն ներկայացված է www.armeps.am կայքի «Հաճախ փրվող հարցեր» բաժնում,
- Armeps համակարգի հետ հարցեր և խնդիրներ առաջանալիս դիմել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ ք. Երևան, Կոմիտասի 54/բ հասցեով (հեռախոս՝ 28-93-20):

Սույն հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011 թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի, ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 1370-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի Պատվիրատուի կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետև՝ Մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Հայտեր կարող են ներկայացնել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունները:

Սույն ընթացակարգին մասնակցելու համար Մասնակիցը www.armeps.am կայքի միջոցով Պատվիրատուին է ներկայացնում ընթացակարգի հայտ: Հայտին կցվում են սույն հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը (տեղեկությունները)՝ հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Մասնակիցները կարող են ընթացակարգի հայտ ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես էլ միաժամանակ մի քանի կամ բոլոր չափաբաժինների համար¹:

¹ Եթե ընթացակարգը չափաբաժիններով է, ապա առաջին քայլով պետք է www.armeps.am կայքի «Հայտ» դաշտում նախապես նշել այն չափաբաժինը կամ չափաբաժինները, որոնց համար մասնակիցը հայտ է ներկայացնում, որից հետո նոր միայն լրացնել մնացած դաշտերը, այլապես հայտի փաստաթղթերը չեն բացվի գնահատման ժամանակ:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել www.armeps.am կայքի միջոցով ոչ ուշ, քան **2014 թվականի մարտի 11-ը, ժամը 11.00-ն**:

Հայտերը կբացվեն 2014 թվականի **մարտի 11-ին ժամը 11.00-ին** www.armeps.am կայքի միջոցով:

Գնահատող հանձնաժողովի առաջին բացող անդամն իր կատարած նշումներով երկրորդ բացող անդամի դիտարկմանն է ներկայացնում բացման ենթակա այն հայտերի ցուցակը, որոնց համակարգը դիտել է որպես ներկայացված (պիտանի) հայտեր, որից հետո երկրորդ բացող անդամը հաստատում է իրեն ներկայացված հայտերի ցուցակը: Հաստատումից հետո բեռնվում է հայտերի բացման մասին արձանագրությունը (համակարգում՝ հաշվետվություն), որը հայտերի բացման օրը հանձնաժողովի քարտուղարը ոչ ավտոմատ եղանակով տրամադրում է մասնակիցներին:

Գնահատման գործընթացը կատարվում է գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան: Գնահատման արդյունքները վավերացվում են գնահատող հանձնաժողովի նախագահի կողմից, որից հետո հայտերը դասակարգվում են ըստ գնահատման արդյունքների՝ նվազագույն գնային առաջարկից մինչև առավելագույն գնային առաջարկը:

Հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Հայտերի բացման նիստի օրվան հաջորդող օրացուցային օրվա ընթացքում հայտերի բացման նիստի արձանագրության պատճենները տրամադրվում են բոլոր մասնակիցներին:

Հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Ընդ որում, հանձնաժողովի կողմից 1-ին, 2-րդ, 3-րդ և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելիս՝ գնային առաջարկների համեմատումն իրականացվում է առանց ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) գումարի հաշվարկման:

Սույն հրավերով նախատեսված փաստաթղթերը գնահատելու նպատակով հրավիրվող նիստում հանձնաժողովը գնահատում է սույն հրավերի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին:

Հայտերի գնահատումը, համեմատումը և հաղթողների որոշումը իրականացվելու է ըստ առանձին չափաբաժինների:

Հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

Ընտրված մասնակցին որոշելուց հետո գնահատող հանձնաժողովի քարտուղարը՝

1) ոչ ավտոմատ եղանակով համակարգում նշում է ընթացակարգի բավարար գնահատված մասնակիցներին՝ նրանց դասակարգելով ըստ գնահատման արդյունքների և գնային առաջարկների.

2) ընթացակարգի մասնակիցներին համակարգի միջոցով ուղարկում է՝

ա. հայտարարություն գնահատման արդյունքների մասին՝ կցելով հայտերի գնահատման մասին արձանագրությունը.

բ. հայտարարություն՝ պայմանագիր կնքելու որոշման մասին, որը հրապարակում է նաև gnumner.am և armeps.am կայքերում:

Գնային առաջարկների հավասարության դեպքում, ոչ գնային պայմաններին բավարար գնահատված մասնակիցների հետ գները նվազեցնելու նպատակով կկազմակերպվեն միաժամանակյա բանակցություններ:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության կարիքների համար՝ գրենական ապրանքների ձեռքբերման (որը կազմված է՝ 41 չափաբաժնից) տեխնիկական բնութագիրը, գնման և վճարման ժամանակացույցերը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N3 հավելվածում: Մասնակիցը Հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝

1) «Պիտանելիության չափորոշիչ».

- ընթացակարգին մասնակցելու դիմում՝ (Հավելված N 1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն:

2) «Ֆինանսական չափորոշիչ».

- գնային առաջարկ, որը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով և կայքում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման (Հավելված N 2):

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ալվինա Գրիգորյանին:

Հեռախոս՝ 010 511-354:

Էլ.փոստ՝ a.grigoryan@mta.gov.am

Պատվիրատու՝ **ՀՀ տարածքային կառավարման նախարարություն:**

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԳՐԵՆԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ՏԿՆ-ՇՀԱՊՁԲ-11/3...**

ք. Երևան

<< >> << >> 20 թ.

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Կ. Իսախանյանի, որը գործում է ՀՀ տարածքային կառավարման նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «<_____>>» -ն, ի դեմս տնօրեն _____յանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված գրենական պիտույքները /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

3.1.8 Չննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայմանագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Սույն պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Սույն պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ _____ (_____) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 20 թ. դեկտեմբերի 25-ը:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ

Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Վաճառողը՝ Ապրանքի հանձնման ավարտից 5 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ /Հավելված N 4/:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5-օրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.4 Ապրանքը Գնորդի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՌԻՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) Պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

9.8 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.9 Պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.10 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման
նախարարություն
ք. Երևան, Հանրապետության հր.
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011003150
Հ/Հ 900011003168
ՀՎՀՀ 02578338

ԿԱՏԱՐՈՂ

«-----» -----Ը
Հասցե -----
ՀՎՀՀ -----
«----- Բանկ» --Ը
Հ/Հ -----

Աշխատակազմի ղեկավար

Տնօրեն

----- Կ. ԻՍԱԽԱՆՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ

(ստորագրություն)
Կ.Տ

ԳՐԵՆԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

NN	Անվանումը	Տեխնիկական բնութագրերը	Չափի միավորը
1	Սոսինձ	Չոր սոսինձ գրասենյակային (սոսնձամատիտ) 15 գ զանգվածով, պլաստմասսայե տարայով, թուղթ սոսնձելու համար	հատ
2	Սոսինձ (էմուլսիա)	Սոսինձ պոլիվինիլացիտատային (էմուլսիա)	կգ
3	Բաղադրանյութ (շտրիխ)	Բաղադրանյութ տպագրված տեքստը մաքրելու համար ջրային հիմքով կամ այլ օրգանական լուծիչով, մինչև 20°C չսառչող, 20 մլ տարողությամբ սրվակներ	հատ
4	Պոլիմերային ինքնակաշուն ժապավեն (սկոչ)	Գլանափաթեթված ժապավեն 48 մմ՝ լայնությամբ, սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ 0,030-0,060 մմ, ժապավենի երկարությունը՝ 100 մ, ԳՕՍՏ 20477-86	հատ
5	Պոլիմերային ինքնակաշուն ժապավեն (սկոչ)	Գլանափաթեթված ժապավեն 19 մմ՝ լայնությամբ, սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ 0,030-0,060 մմ, ժապավենի երկարությունը՝ 36 մ, ԳՕՍՏ 20477-86	հատ
6	Թղթապանակ (ֆայլ)	Թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար, արագակարներին ամրացնելու հնարավորություն	հատ
7	Ռետին	Ռետինե ջնջոց փոքր՝ նախատեսված մատիտով գրածները մաքրելու համար:	հատ
8	Թուղթ A4 ֆորմատի (21x29.7)	A4, չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ ² , (210x297) մմ:	տուփ/ 500 հատ
9	Ծրար 1	Ծրարներ չթափանցող, եռանկյունաչափ փակվող, խիտ թղթից՝ նախատեսված գաղտնիություն պարունակող նամակների համար, (250x177) մմ ձևաչափի և «Հայաստանի հանրապետության տարածքային կառավարման նախարարություն» գրառմամբ	հատ
10	Ծրար 2	Սպիտակ թղթ, խտությունը ոչ պակաս 100 գր/մ ² ,	հատ

		փոստային ծրարներ՝ ուղիղ կամ անկյունային կափույրով, ինքնաստսնձվող, (255x175) մմ չափի և «Հայաստանի հանրապետության տարածքային կառավարման նախարարություն» գրառմամբ	
11	Ծրար 3	Ծրար՝ A4 (210x297) մմ ձևաչափի, 90 % սպիտակության, 1 մ ² մակերեսը՝ 100-120գր. զանգվածով N1 օֆսեթային թղթից ըստ ԳՕՍՏ 9094-89, ինքնաստսնձվող, «Հայաստանի հանրապետության տարածքային կառավարման նախարարություն» գրառմամբ	հատ
12	Նոթատետր	Նոթատետր A4 (210x297) մմ ձևաչափի, 50 թերթ	հատ
13	Նոթատետր	Նոթատետր A5 (148x210) մմ ձևաչափի, 50 թերթ	հատ
14	Օրատետր	Օրատետր գրասենյակային, A5 ձևաչափի կաշվե կազմով, հայերեն և ռուսերեն կամ անգլերեն, 2015թ.:	հատ
15	Օրատետր	Օրատետր գրասենյակային, A4 ձևաչափի կաշվե կազմով, հայերեն և ռուսերեն կամ անգլերեն 2015թ.	հատ
16	Արագակար, թղթյա	Արագակար կավճած սովորաթղթից, թելերով, A4 (210x297) մմ ձևաչափի թերթերի համար	հատ
17	Թուղթ նշումների համար (կաշուն)	Թուղթ գրելու, ստսնձվածքը 1,25 մմ-ից ոչ պակաս, սպիտակությունը 75%-ից ոչ պակաս, ԳՕՍՏ 18510-87 կամ համարժեք, փաթեթավորումը՝ ցանկացած տեսքով	տուփ/ 100 թերթ
18	Թուղթ նշումների համար	Թուղթ նշումների համար, գունավոր, կաշուն, տարբեր չափերի, տրցակներով	տուփ/ 100 թերթ
19	Էջաբաժանիչ (կաշուն)	Կաշուն 5 գույն	հատ/ 5 գույն
20	Բացիկ (ծրարով)	Շնորհավորական բացիկներ, հայերեն	հատ
21	Օրացույց սեղանի	Սեղանի օրացույց նշումների համար տարբեր չափերի, պոկովի կամ թերթովի, պատվանդանով, գունավոր տպագրությամբ, 2015թ.	հատ
22	Օրացույց պատի	Պատին ամրացվող մասով, գունավոր տպագրությամբ, գրքատիպ, յուրաքանչյուր ամիսն առանձին էջի վրա, 2015թ	հատ
23	Օրացույցի տակդիր	Պլաստմասսայե տակդիր՝ օրացույցի համար,	հատ
24	Կոճգամ	Մետաղյա, սովորական:	տուփ/ 50 հատ
25	Կարիչ (ստեպլեր)	Գրասենյակային կարիչ մինչև 20 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար	հատ
26	Կարիչ (ստեպլեր)	Գրասենյակային կարիչ 20-ից մինչև 30 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար	հատ
27	Կարիչ (ստեպլեր)	Գրասենյակային կարիչ 30-ից մինչև 50 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար	հատ
28	Կարիչի մետաղալարե կապեր	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր բլոկներով՝ 10 մմ/6 մմ:	տուփ/ 1000 հատ

29	Կարիչի մետաղալարե կապեր	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր բլոկներով՝ 24մմ/6մմ, 26մմ/6մմ :	տուփ/ 1000 հատ
30	Ամրակ	Փոքր , գրասենյակային ամրակներ (սկրեպ) մետաղական կամ պոլիմերային պատվածքով, (30-33) մմ երկարությամբ: Թղթի դարսը լիարժեք ամրությամբ միասնական պահելու կարողությամբ:	տուփ/ 100 հատ
31	Սեղմակ (կլիպս) փոքր	Մետաղական, լայնությունը 19 մմ	հատ
32	Սեղմակ (կլիպս) միջին	Մետաղական, լայնությունը 25 մմ	հատ
33	Սեղմակ (կլիպս) մեծ	Մետաղական, լայնությունը 32 մմ	հատ
34	Հաշվասարք (կալկուլյատոր)	12 նիշանի սեղանի, գործողությունները ցուցադրումով վահանակի վրա ինքնալիցքավորվող	հատ
35	Սկավառակներ, CD	CD-R, CD-RW	հատ
36	Սկավառակներ, DVD	DVD-R, DVD-RW, 4,7 Gb	հատ
37	Քանոն	Ուղիղ քանոն, գծաբաժանումներով, առավելագույն երկարությունը, 30 սմ, պլաստմասսայե	հատ
38	Գրիչ	Գնդիկավոր 0.5 մմ ծայրով, կապույտ, կարմիր միջուկներով	հատ
39	Գրիչ (գել)	Գրիչ, 0,5 մմ ծայրով, կապույտ գույնի	հատ
40	Գծանշիչ (մարկեր)	Տարբեր գույնի, նախատեսված ընդգծումներ, նշումներ անելու համար, ֆետրից կամ այլ ծակոտկեն նյութից տափակ ծայրոցով	հատ
41	Մատիտ	Հասարակ սև գրիֆեյլներով կարծր պատյանով, անվանական տրամագծերը՝ 0,7 սմ	հատ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման
 նախարարություն
 ք. Երևան, Հանրապետության հր.
 Կառավարական տուն 2
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
 Հ/Հ 900011003150
 Հ/Հ 900011003168
 ՀՎՀՀ 02578338

ԿԱՏԱՐՈՂ

«-----» -----Ը
 Հասցե -----
 ՀՎՀՀ -----
 «----- Բանկ» --Ը
 Հ/Հ -----

Աշխատակազմի ղեկավար

Տնօրեն

----- Կ. ԻՍԱԽԱՆՅԱՆ
 (ստորագրություն)
 Կ.Տ

 (ստորագրություն)
 Կ.Տ

ԳՐԵՆԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

<< դրամ

Հ/Հ	Ապրանքի			Նախատեսվում է գնել 2014թ.								Ընդամենը	
	Անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը	I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ			
				քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1	Սոսինձ	հատ				40		40		50		130	
2	Սոսինձ (էմուլսիա)	կգ				3		3		3		9	
3	Բաղադրանյութ (շտրիխ)	հատ				30		30		35		95	
4	Պոլիմերային հնքնակաչուն ժապավեն (սկոչ)	հատ				5		5		5		15	
5	Պոլիմերային հնքնակաչուն ժապավեն (սկոչ)	հատ				15		20		15		50	
6	Թղթապանակ (\$այլ)	հատ				1500		1500		1600		4600	
7	Ռետին	հատ				30		30		47		108	
8	Թուղթ A4 ֆորմատի (21x29.7)	տուփ/500 հատ				150		150		200		500	
9	Ծրար 1	հատ				1000		1000		1000		3000	
10	Ծրար 2	հատ				1000		1000		1000		3000	
11	Ծրար 3	հատ				300		300		400		1000	
12	Նոթատետր	հատ				30		30		47		110	
13	Նոթատետր	հատ				15		15		20		50	

14	Օրատետր	հատ							9		9	
15	Օրատետր	հատ							35		35	
16	Արագակար, թղթյա	հատ			300		300		400		1000	
17	Թուղթ նշումների համար (կպչուն)	տուփ/ 100 թերթ			50		50		40		140	
18	Թուղթ նշումների համար	տուփ/ 100 թերթ			70		70		70		210	
19	Էջաբաժանիչ (կպչուն)	հատ/ 5 գույն			10		10		10		30	
20	Բացիկ (ծրարով)	հատ							1000		1000	
21	Օրացույց սեղանի	հատ							64		64	
22	Օրացույց պատի	հատ							20		20	
23	Օրացույցի տակդիր	հատ							15		15	
24	Կոճգամ	տուփ/5 0 հատ			3		3		4		10	
25	Կարիչ (ստեպլեր)	հատ			10		15		15		40	
26	Կարիչ (ստեպլեր)	հատ			5		10		10		25	
27	Կարիչ (ստեպլեր)	հատ			5		10		10		25	
28	Կարիչի մետաղալարե կապեր	տուփ/ 1000 հատ			200		200		180		580	
29	Կարիչի մետաղալարե կապեր	տուփ/ 1000 հատ			150		150		100		400	
30	Ամրակ	տուփ/ 100 հատ			25		25		25		75	
31	Սեղմակ (կլիպս) փոքր	հատ			25		25		34		84	
32	Սեղմակ (կլիպս) միջին	հատ			25		25		34		84	
33	Սեղմակ (կլիպս) մեծ	հատ			25		25		34		84	
34	Հաշվասարք	հատ			3		3		4		10	

	(կալկուլյատոր)											
35	Սկավառակներ, CD	հատ			50		100		50		200	
36	Սկավառակներ, DVD	հատ			30		30		40		100	
37	Քանոն	հատ			20		20		25		65	
38	Գրիչ	հատ			150		150		100		400	
39	Գրիչ (գեյ)	հատ			50		50		120		220	
40	Գծանշիչ (մարկեր)	հատ			50		50		100		200	
41	Մատիտ	հատ			50		50		50		150	
Ընդամենը				X		X		X		X		X

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման նախարարություն
 ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական տուն 2
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
 Հ/Հ 900011003150
 Հ/Հ 900011003168
 ՀՎՀՀ 02578338

ԿԱՏԱՐՈՂ

«-----» ----Ը
 Հասցե -----
 ՀՎՀՀ -----
 «----- Բանկ» --Ը
 Հ/Հ -----

Աշխատակազմի ղեկավար

----- Կ. ԻՍԱԽԱՆՅԱՆ
 (ստորագրություն)
 Կ.Տ

Տնօրեն

 (ստորագրություն)
 Կ.Տ

**ԳՐԵՆԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԵՐՄԱՆ
 ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ***

ՀՀ դրամ

N	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2014թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1	Գրենական ապրանքներ				25 %	25 %	25 %	50 %	50 %	50%	80%	80%	100 %	100 %
	Ընդամենը				25 %	25 %	25 %	50 %	50 %	50%	80%	80%	100 %	100 %

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
 ՀՀ տարածքային կառավարման նախարարություն
 ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական տուն 2
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
 Հ/Հ 900011003150
 Հ/Հ 900011003168
 ՀՎՀՀ 02578338

ԿԱՏԱՐՈՂ
 «-----» ----Ը
 Հասցե -----
 ՀՎՀՀ -----
 «----- Բանկ» --Ը
 Հ/Հ -----

Աշխատակազմի ղեկավար

Տնօրեն

----- Կ. ԻՍԱԽԱՆՅԱՆ
 (ստորագրություն)
 Կ.Տ

 (ստորագրություն)
 Կ.Տ

Կատարող

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
hh _____

հվհհ _____

գտնվելու վայրը _____
hh _____

հվհհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

<<____>> <<_____>> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<____>> <<_____>> 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն՝ ի դեմս _____

և _____ Կատարողը՝ _____ ի

դեմս _____, _____ հիմք

ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը _____ 20__թ-ից _____ 20__ թ.

ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը				

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

Աշխատանքը ընդունեց

ստորագրություն

ստորագրություն

Ազգանուն, Անուն
Կ.Տ.

Ազգանուն, Անուն
Կ.Տ.